ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 104

ք. Երևան 05.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00498117; գործունեության հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ե. Թադևոսյան 5շ. 34բն.) միջև 12.05.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-22/6-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 1000 հատ Պաշտպանիչ հանդերձանք (ծնկակապեր) և 2-րդ չափաբաժնով նախատեսված 1000 հատ Պաշտպանիչ հանդերձանք (արմնկակապեր): Սակայն, «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն վերոհիշյալ ապրանքները մատակարարել է 14.11.2023թ.-ին, որոնք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հաշվի առնելով, որ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ